

պէտք էին ըլլալ, իրենց ունեցած քիչովն իսկ համաշխարհային արժէքներու եւ ստեղծագործութեանց կարաւանին խառնուելու համար: Յաւակնութիւնը, ծանծաղամտութիւնը սուսերայէս հայկական ունակութիւններ են. թուրքը բոլորովին ժուժկալ ու համեստ է՝ երբ իմացական-մշակութային մարդերուն կը վերարեքի խնդիրը:

Քրքրեցէք իրենց պատմութիւնը, հետեւեցէք իրենց այսօրուայ մամուլին եւ պիտի համոզուիք որ այս մարդիկը մեզմէ շատ ազատաստ ու յանգուզն են՝ երբ իրենց պակասութիւններն ու բացասական կողմերը քըննադատելու եւ խոստովանելու տեղը կը ներկայանայ: Թէեւ, այսպիսի շարժառիթներով կազմուած թուրք քննադատական գրականութեան եւ յաճախ ողբերու շեշտը ստացող դժգոհութեանց առջեւ մենք պատրաստ ենք հազարներով ու ազգովին ծափ դաբելու, թէ «տեսէ՛ք, թուրքերը մեռան, կը մեռնին կոր, դրամատիրական գործերու ընդունակ չեն, երկաթուղի չինել չեն գիտեր, բժիշկ չունին, զեղազորձ չունին, գրականութենէ եւ գիրքէ զուրկ են, թուրք նաւահանգիստներու միջեւ երթեւեկը դադարած է, Պոլիս առաջուան չափով առուաուր չընեն, թուրք զիւղայիտութիւնը սովամահ է դարձած, երկիրը աղքատ ու աւերակ է, պաշտօնեաներու ամսականները չեն վճարուիր, զեղծումն ու չարաչափութիւնը տիրապետող երեւոյթի են փոխուած, անասունները համաճարակների եւ երախաները ջերմէ եւ բիւր հիւանդութիւններէ կը տատապին», եւ ասոնց նման անսպառ նախադասութիւններ, որոնց հիմքը մեր երեւակայութիւնն է մեծ չափով, եւ մասամբ ալ թուրք մամուլին քըննադատական լեզուն, — լեզու մը, որ թուրքերու արթննալուն ու իրենց պակասութիւնները սրբազրելու ցանկութենէն եւ կամքէն առաջ կուզայ պարզապէս:

Մեր սիրելի հեղինակը, ընկ. Ռուբէն, քեմալական բարենորոգմանց արժէքն ու տարողութիւնը թեթեւցնելու համար, հարկ կը ըլլայ գիտելու թուրքիոյ անցեալ դէպքերուն, «հին-հին դարուց յիշատակ» պատմութեան, ըսելով առանց այլեւայլ՝ թէ արարական փաթթոցն ու բիւզանդացիներու Փէսը միայն

որդեգրող ժողովուրդ մը, այսօր առակ չ'զլխարկէն տարբեր բան մը ընդօրինակելու եւրոպայէն: Եւ այս կտրուկ մտքին համար դժուար չէ նոյնիսկ Փրանսացի հետազոտողներէ մէջըրումներ ընել՝ թէ «Աւելի լաւ չ'ը ըլլար մտածել փոխելու թըքական կրօնակը ծալուած ոտնամանները կամ փապուսները, քան գլխանոցները, որովհետեւ քանի թուրք ժողովուրդը մնայ փապուսով, կարելի է նախատեսել, որ ան չի կրնար առանց սայթաքելու քալել քաղաքակրթութեան ճամբով»:

Գլխարկէն մինչեւ ոտնամանները կատարուած հետազոտութիւն մը՝ զիտական բովանդակութենէ զերծ ըլլալէն զատ, կը մասնէ կրկին՝ քեմալական բարենորոգումները ամէն զնով ժխտելու եւ ծաղրելու հայկական հակամիտութիւնը: Ինչ անունով ալ որ խօսինք, չպիտի կարենանք նսեմացնել մեր թշնամիներու գործը: Այսպիսի նպատակի մը մէջ ամենէն տկար գէնքն են ծիծաղն ու սղատոնական չկամութիւնը եւ սուսերայէս բառախաղերը, — «սիփիլիզասիոն քէ սիվիլիզասիոն»:

Հարէմի ոչնչացումը՝ «Քեմալի ընկերային յեղափոխութեանց ամենէն առողջը եւ արժէքաւորը» կը համարէ ընկ. Ռուբէն, բայց այս յայտարարութիւնը եւս չ'ուշանար ջուրը նետելու: Սուլթան Օսման Գ.ի եւ Սուլթան Ազիզի նոյնանման փորձերուն անյաջողութեան օրինակովը: Եւ կը յարէ —

«Այս (ընտանիքի) գաղափարը կը ստեղծուի կամ կրօնքով կամ աւանդութեամբ: Քրքրիտոնեանները միակին են, որովհետեւ ալպայէս կը պատուելի կրօնքը: Թուրքերը բողոքական են, որովհետեւ ալպ կը պատուելի կրօնքը: Որպէսզի ընտանիք կազմուէր հարէմի փոխարէն, պէտք էր որ քրիստոնէական կրօնքն ալ որդեգրուէր: Եթէ կրօնքը ազգակ չէ, այն ատեն պէտք է աւանդութիւն՝ ընտանիքի գաղափարը իրազործելու համար: Քրիստոնէաներու աւանդութիւնը, անկախ կրօնքէն, միակնութիւնն է եղած, թուրք աւանդութիւնը բազմակնութիւն է: Այս պարագաներու առկա խիստ դժուարին է բազմակնութեան վերացումը եւ իսկական ընտանիքի հաստատումը: Այս գործը պիտի հանգիպի անառակութեան, ցոփութեան, որոնց նշանները կ'երեւան արդէն